# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

Վիճակագրության պետական խորհրդի նիստի

-----------------------------------------------------------------------------------------------------------

14.09.2007թ. ժ.11: 00

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան *(Խորհրդի նախագահ),* Վ.Դանիելյան, Յու. Պողոսյան, Վ. Դավթյան, Ա. Աղազարյան *(Խորհրդի անդամներ)*

Հ. Գրիգորյան *(Խորհրդի քարտուղար)*

**Հրավիրված էին՝**

Լ. Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Զ. Միրզոյան (նախագահի գլխավոր խորհրդական), Ա. Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Գ.Գյուրջյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Գ.Թորոսյան (տրանսպորտի և կապի բաժնի պետ),
Դ. Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ա. Պետրոսյան (վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ), Ա.Գյուլբենկյան (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ):

**Օրակարգի նախագծում** ՝ հինգ հարց.

1. «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» ձև թիվ 1-ԱՎՏՈ (ամսական),

- «Երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 2-ԵՐԿԱԹ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 65-ԵՐԿԱԹ (տարեկան)
- «Օդային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ԱՎԻԱ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի Հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» ձև թիվ 65-ԱՎԻԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունները և դրանց լրացման հրահանգները ՀՀ Վիճակագրական պետական խորհրդի որոշումով հաստատելու վերաբերյալ» հարցը:

*/Զեկուցող*՝ Գ. Թորոսյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 1998-2005 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները Պռովո համալսարանից (ԱՄՆ) Քրիստոֆեր Պալմերին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող*՝ Դ. Մարտիրոսովա/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 23-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Պետրոսյան/

4. Հաղորդում Հնդկաստանի Նյու Դելի քաղաքում 06.08–10.08.2007թ. ՄԱԿ-ի Վիճակագրության Բաժանմունքի (Վարչության), Համաշխարհային Բանկի, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի և ՄԱԿ-ի Կանանց Զարգացման Հիմնադրամի հրավերով “Գենդերային վիճակագրության արտադրություն” խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Գյուլբենկյան/

4.1. Հաղորդում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին քաղաքում 02.09–07.09.2007թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության անունից գերմանական «Միջազգային հզորությունների զարգացում» /ՄՀԶ՝ InWEnt/ կազմակերպության հրավերով «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագրի նախապատրաստում և իրականացում Հայաստանի և Վրաստանի փորձը» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ:

*/Զեկուցող՝* Յու. Մ. Պողոսյան/

5. Այլ հարցեր:

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» ձև թիվ 1-ԱՎՏՈ (ամսական),

- «Երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 2-ԵՐԿԱԹ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 65-ԵՐԿԱԹ (տարեկան)
- «Օդային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ԱՎԻԱ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի Հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» ձև թիվ 65-ԱՎԻԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունները և դրանց լրացման հրահանգները ՀՀ Վիճակագրական պետական խորհրդի որոշումով հաստատելու վերաբերյալ» հարցը:

*/Զեկուցող՝* Գ. Թորոսյան/

**Որոշեցին՝**

Հաստատել

- «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» ձև թիվ 1-ԱՎՏՈ (ամսական),
- «Երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 2-ԵՐԿԱԹ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 65-ԵՐԿԱԹ (տարեկան)
- «Օդային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ԱՎԻԱ (ամսական),
- «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի Հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» ձև թիվ 65-ԱՎԻԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունները և դրանց լրացման հրահանգները:

*/Նորմատիվ/*

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 1998-2005 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները Պոովո համալսարանից (ԱՄՆ) Քրիստոֆեր Պալմերին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝* Դ. Մարտիրոսովա/

**Որոշեցին՝**

Թույլատրել տրամադրել, «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 1998-2005 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները Պոովո համալսարանից (ԱՄՆ) Քրիստոֆեր Պալմերին զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմանով:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 23-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝* Ա. Պետրոսյան/

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «2007 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. հավելված III-ի «1. Վիճակագրական ժողովածուներ» բաժնի «4400-101» և «4500-101» ծածկագրերի տողերում, հավելված X-ի «Վիճակագրական հրապարակումներ» բաժնի 31-րդ և 32-րդ տողերում, հավելված X-ի «Վիճակագրական հրապարակումների օրացույցը թեմատիկ ներկայացմամբ» բաժնի 39-րդ և 40-րդ տողերում՝ «III եռամսյակ» բառերը փոխել «IV եռամսյակ» բառերով:

*/Նորմատիվ/*

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

Հաղորդում Հնդկաստանի Նյու Դելի քաղաքում 06.08–10.08.2007թ. ՄԱԿ-ի Վիճակագրության Բաժանմունքի (Վարչության), Համաշխարհային Բանկի, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի և ՄԱԿ-ի Կանանց Զարգացման Հիմնադրամի հրավերով "Գենդերային վիճակագրության արտադրություն" խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝* Ա. Գյուլբենկյան/

4.1. Հաղորդում Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բեռլին քաղաքում 02.09–07.09.2007թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության անունից գերմանական «Միջազգային հզորությունների զարգացում» /ՄՀԶ՝ InWEnt/ կազմակերպության հրավերով «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագրի նախապատրաստում և իրականացում Հայաստանի և Վրաստանի փորձը» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ:

*/Զեկուցող`* Յու. Մ. Պողոսյան/

**Որոշեցին`**
Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունել ի գիտություն
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ`5, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ